DAAD

Deutscher Akademischer Austauschdienst
German Academic Exchange Service

Ուսանել Գերմանիայում

Կարևոր տեղեկատվություն **ծնողների համար**

My GUIDE | The gateway to your German university

Studying in Germany?



My GUIDE offers

- Over 20,000 degree programmes
- Immediate eligibility check
- Direct contact with German universities
- Checklist feature for your study planning

Register Now

→ myguide.de

DAAD
Deutscher Akademischer Austauschdienst
German Academic Exchange Service

SPONSORED BY THE
Federal Ministry of Education and Research

Deutscher Akademischer Austauschdienst
German Academic Exchange Service

Ուսանել Գերմանիայում

Կարևոր տեղեկատվություն ծնողների համար

5-րդ հրատարակություն

Ո՞վքեր ենք մենք

Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD) գերմանական բուհերը և ուսանողական միությունները միավորող հաստատություն է: DAAD-ի նպատակն է ամբողջ աշխարհում աջակցել ակադեմիական փոխանակմանը՝ ամենից առաջ ուսանողների և գիտնականների փոխանակման միջոցով:

Մեր տեղեկատվական գրքույկներում, → www.daad.de կայքում, ինչպես նաև արտասահմանում գործող DAAD-ի գրասենյակների և տեղեկատվական կենտրոնների կայքէջերում Դուք կգտնեք Գերմանիայում ուսման և ապրելու մասին տեղեկություններ:

Սիրելի՛ ծնողներ,

որպես ծնող՝ մենք ցանկանում ենք միայն լավագույնը մեր երեխաների համար՝ անվտանգություն, անձնական և մասնագիտական զարգացման հնարավորություններ, դրական փորձառություններ, արժեքների վրա հիմնված հարաբերություններ և հավատարիմ ընկերներ: Ուսումնական այցը Գերմանիա կարող է տալ Ձեր երեխային այդ ամենը:

Մենք ուրախ ենք, որ Դուք և Ձեր երեխան դիտարկում եք այն խոստումնալից հնարավորությունները, որոնք տալիս է կրթությունը Գերմանիայում: Իմ երեխաները դեռ շատ փոքր են, բայց ես քաջ գիտակցում եմ, որ նման ծրագրերը կարող են ոչ միայն ոգևորություն, այլև անորոշություն, կասկածներ և նույնիսկ անհանգստություն պատճառել: Այս գրքույկը կօգնի Ձեզ գտնել ամենատարածված և մտահոգող հարցերի պատասխանները, որոնք հաճախ տալիս են ծնողներն ամբողջ աշխարհում:

Գերմանիան առաջարկում է բազում հնարավորություններ ուսման համար: Այստեղի համալսարանները վայելում են բարձր հեղինակություն աշխարհում և շնորհում են միջազգայնորեն ճանաչված ավարտական վկայագրեր: Սա այն բազմաթիվ պատճառներից մեկն է, թե ինչու է Գերմանիան օտարերկրյա ուսանողների համար համարվում ամենագրավիչ երկրներից մեկը: Ավելի քան 411,000 օտարերկրացիներ այժմ ուսանում են Գերմանիայում: Եվ մենք ուրախ ենք տեսնել, որ մեր բուհերը գնալով ավելի են համապատասխանում օտարերկրյա ուսանողների պահանջներին և առաջարկում նրանց ավելի բազմազան ընտրություն:

Մենք շատ ուրախ կլինենք, եթե Ձեր երեխան որոշում կայացնի ուսում ստանալ Գերմանիայում: Հավատացնում եմ Ձեզ, որ նա չի զղջա այդ որոշման համար:

Դոկտոր Կաի Ձիքս
DAAD գլխավոր քարտուղար

Բովանդակություն

6 Ինչ է տալիս ուսումն արտերկրում

9 Ինչն է խոսում հօգուտ ուսմանը Գերմանիայում

10 Գերմաներենի իմացության ինչ մակարդակ պետք է ունենա իմ երեխան

13 Ինչպես կարող է իմ երեխան նախապատրաստվել ուսմանը Գերմանիայում

14 Ո՞ր բուհն է առավել նպատակահարմար իմ երեխայի համար

17 Ո՞ր մասնագիտությունն է առավել նպատակահարմար իմ երեխայի համար

18 Որքա՞ն ժամանակ պետք է մնալ Գերմանիայում

21 Ինչ արժե ուսումը Գերմանիայում

22 Կա՞ն արդյոք կրթաթոշակներ կամ այլ ֆինանսական օգնություններ

24 Ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ իմ երեխային երկիր մուտք գործելու համար

25 Որքա՞նով է ժամանակակից և ապահով Գերմանիան

28 Ինչպիսի՞ն է բժշկական սպասարկումը

30 Ինչպե՞ս են Գերմանիայում հոգ տանելու իմ երեխայի մասին

32 Որտե՞ղ է ապրելու իմ երեխան

33 Ինչ կարող է առաջարկել Գերմանիան որպես ճանապարհորդական երկիր

34 Լրացուցիչ տեղեկություններ

36 Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների քարտեզ

Ինչ է տալիս ուսումն արտերկրում

Օտար երկրում ապրելը **նոր հեռանկարներ** է բացում: Տարբեր ծագման, արժեքների և աշխարհայացքների տեր մարդկանց հետ շփումը ծնում է նոր մտքեր ու գաղափարներ:

Արտասահմանում ձեռք բերած փորձը ձևավորում և հարստացնում է մարդու անհատականությունը ողջ կյանքի ընթացքում:

Ծանոթությունը մեկ այլ երկրի և մշակույթի հետ **ընդլայնում է մարդու մտահորիզոնը**: Եվ բոլորովին էլ կապ չունի՝ այդ երկիրը գտնվում է հարևանությամբ, թե հայրենիքից հեռու:

Արտասահմանում ուսանելը Ձեր երեխային կօգնի դառնալ ավելի **ինքնուրույն և ինքնավստահ**: Անձը հարստանում է նաև ձեռք բերելով արտասահմանցի ընկերներ, ինչը սովորաբար հեշտ է ստացվում արտասահմանում ուսանելու ժամանակ: Բացի դրանից, ուսումն արտերկրում Ձեր երեխային հնարավորություն կտա զգալիորեն **կատարելագործել օտար լեզվի իր գիտելիքները**:

Միջազգային փորձը ընդլայնում է մասնագիտական հնարավորությունները:

Ուսումը կամ աշխատանքային փորձը արտասահմանում Ձեր երեխայի կենսագրության մեջ զգալի առավելություն կլինի, ինչն, իհարկե, բարձր կգնահատվի ապագայում աշխատանք փնտրելու և մասնագիտական կյանք մուտք գործելու ժամանակ: Բացի դրանից, ուսումն արտասահմանում Ձեր երեխային հնարավորություն կտա արդեն բավականին վաղ հաստատել **միջազգային գիտական և մասնագիտական կապեր**:

Սովորել արտասահմանում այսօր այլևս չի նշանակում, որ ընդհանուր առմամբ երկարում է ուսման վրա ծախսած ժամանակը: Գերմանիայում ձեռք բերած ուսման արդյունքները ընդունվում են նաև հայրենիքում:

Կարճ ասած, ուսումն արտասահմանում արժեքավոր ներդրում է Ձեր երեխայի ապագայի համար:

Աննա Վարդանյանց

2013 թվ. ուսանել է Տրիերի համալսարանում՝ DAAD կրթաթոշակի շրջանակներում և ստացել է «Քաղաքական տնտեսագիտություն» բաժնի մագիստրոսական կոչում: Այժմ Oracle ընկերության տարածաշրջանի ամպային տեխնոլոգիաների զարգացման պատասխանատուն է:

Գերմանիայում ուսանելն ինձ ոչ միայն ակադեմիական գիտելիքներ տվեց, այլև սովորեցրեց, թե ինչպես ճիշտ կողմնորոշվել աշխատանքային միջավայրում:

Երբ մտածում եմ Գերմանիայում անցկացրած տարիների մասին, բացի ծրագրում ներառված բազմաբովանդակ առարկաներից, խրթին քննություններից, գրադարանում անցկացրած երկար ժամերից, առավել ակնհայտ հասկանում եմ, որ ամենակարևոր գիտելիքները, որ ձեռք եմ բերել՝ դա արագ ընկալել և յուրացնելն էր մեծ քանակությամբ տեղեկատվություն, ստացած գիտելիքները պրակտիկ միջավայրում ճիշտ կիրառելը, ընկերական և աշխատանքային կապեր ստեղծելը, որոնք ինձ օգտակար են եղել ամբողջ կյանքի ընթացքում: Ինչպես ես միշտ սիրում եմ ասել.

- Գերմանիայի ուսումը ինձ սովորեցրեց սովորելու հմտությունը:

Բացի գիտելիքներից, կրթաթոշակը և Գերմանիայում ապրած տարիները հնարավորություն ընձեռեցին ճանապարհորդել ամբողջ Եվրոպայով մեկ, ծանոթանալ տարբեր ազգությունների և իրենց մշակույթների հետ, ինչպես նաև իրենց ներկայացնել Հայաստանը: Իրավացիորեն սա կրթական, մշակութային և արժեքային փոխանակման ծրագիր է, որը կլցնի և կհարստացնի ամեն մեկի կյանքը և կօգնի հետագայում կայանալ ցանկացած ոլորտում:

Ինչն է խոսում հօգուտ ուսման Գերմանիայում

Գերմանական բուհերը **հիանալի համբավ ունեն ամբողջ աշխարհում**: Այստեղից են ծագում առաջընթացի և նորարարության համար կարևոր և միջազգային նշանակություն ունեցող ազդակներ:

Գիտությունը և հետազոտությունը Գերմանիայում ունեն բարձր դիրք և համբավ:

Ամենահին համալսարանը հիմնադրվել է Հայդելբերգում դեռ 1386թ.: **Գերմանիայի բարձրագույն կրթության ոլորտը բազմազան է**: Կան մի քանի տեսակի համալսարաններ, որոնք ունեն հատուկ ուղղվածություն և տալիս են սովորելու և հետազոտելու բազմազան հնարավորություններ: Այսպիսով, Ձեր երեխան կգտնի իր հետաքրքրություններին և կարիքներին համապատասխանող ուսումնական ծրագիր:

Ձեր երեխան հիանալի պայմաններ կունենա Գերմանիայում արդյունավետ ուսման համար:

Բուհերը և հետազոտական ինստիտուտները **ժամանակակից են և շատ լավ են կահավորված**: Նրանք մեծ նշանակություն են տալիս միջազգայնացմանը: Համաշխարհային փոխանակման նպատակով նրանք համագործակցում են ավելի քան 5400 գործընկեր հաստատությունների հետ ավելի քան 150 երկրներում:

Գերմանիայում ուսանողները ստանում են **ինտենսիվ ակադեմիական աջակցություն**, և նրանց վերաբերվում են որպես ապագա գիտնականների: Եվ սա է պատճառը, որ Գերմանիան միջազգային ուսանողների համար **թիվ 1 ոչ անգլախոս ուղղությունն է**:

Արժե գերմաներեն սովորել:

Գերմաներենը գիտական և համաշխարհային կարևորագույն լեզուներից է: Անգլերեն իմանալն այսօր դիտվում է որպես ինքնըստինքյան պարտադիր, իսկ մեկ այլ օտար լեզվին տիրապետելը ընդլայնում է կարիերայի հնարավորությունները:

Գերմաներենի իմացության ինչ մակարդակ պետք է ունենա իմ երեխան

Օտար երկրում լավ զգալու համար, որպես կանոն, անհրաժեշտ են լավ լեզվական գիտելիքներ: Հետևաբար, կատարյալ կլինի, եթե Ձեր երեխան մինչև Գերմանիա մեկնելը սկսի գերմաներեն սովորել: Կան բազմաթիվ տարբերակներ, օրինակ՝ լեզվի անհատական դասընթացներ Գյոթեի անվան ինստիտուտներում կամ Ձեր երեխայի համալսարանում: Կան նաև առցանց դասընթացներ, ինչպիսիք են *Deutsche Welle*-ի և *Deutsch-Uni Online*-ի կողմից առաջարկվող դասընթացները:

Հայաստանում գերմաներեն սովորելու բազմաթիվ հնարավորություններ կան:

Բուհերն առաջարկում են **ուսմանը զուգահեռ ընթացող լեզվի դասընթացներ: Բուհերից դուրս** գերմաներեն սովորելու առաջարկները նույնպես բազմատեսակ են, ինչպես օրինակ Երևանում գտնվող Գյոթե կենտրոնում, երեկոյան հանրակրթական դասընթացներում կամ բազմաթիվ մասնավոր լեզվական դպրոցներում:

Գերմանական բուհերում չեն ակնկալում, որ արտասահմանցի ուսանողները Գերմանիա ժամանելիս խոսեն կատարյալ գերմաներեն:

Թե ինչ գիտելիքներ պետք է ունենա Ձեր երեխան գերմանական բուհում ուսանելու համար, կախված է ընտրած մասնագիտությունից կամ դասընթացից.

- Ով ընտրում է **միջազգային դասընթացներ**, պետք է, նախ և առաջ, լավ **անգլերեն** իմանա, քանի որ դասավանդման լեզուն սովորաբար անգլերենն է: Գերմանական բուհերում արդեն կան ավելի քան 1700 անգլալեզու ծրագրեր:

- Ով ընտրում է **դասընթաց կամ մասնագիտություն, որի դասավանդումը գերմաներենով է**, պետք է իր գերմաներենի գիտելիքների որոշակի մակարդակն ապացուցող վկայական ունենա: Դրա համար կան տարբեր քննություններ և ստանդարտացված թեստեր, օրինակ՝ գերմաներենը որպես օտար լեզու օտարերկրացի դիմորդների համար թեստը (կարճ՝ *TestDaF*):



Արսեն Գասպարյան
Կ.գ.թ, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան
բուսաբանության ինստիտուտի տնօրեն

2013–2016 թվականներին Բեռլինի ապատ համալսարանում (Freie Universitat, Berlin) իրականացրել եմ իմ դոկտորական հետազոտությունները «Հայաստանի քարաքոսերի բազմազանությունը և պահպանությունը» թեմայով DAAD կրթաթոշակի շնորհիվ: Այս հետազոտության շրջանակներում տպագրել եմ միջազգային գրախոսվող ամսագրերում մի շարք գիտական հոդվածներ և մենագրություն: Հետազոտությունների արդյունքում իմ և գործընկերների ջանքերով հայտնաբերվել է Հայաստանի համար քարաքոսերի ավելի քան 200 տեսակ, իսկ համաշխարհային գիտության համար՝ 5 նոր տեսակ:

2017 թվականին հաջողությամբ պաշտպանել եմ դոկտորական աշխատանքը և վերադարձել Հայաստան:

Գերմանիայում ձեռք բերված փորձն ու գիտելիքը մեր երկրում տարածելու և ոլորտը զարգացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում հիմնել եմ Քարաքոսերի հետազոտման և պահպանության գիտական խումբ, իսկ ներկայումս հանդիսանում եմ Ինստիտուտի տնօրեն:

Վերջերս, հաշվի առնելով իմ ներդրումը քարաքոսաբանության ոլորտում, եվրոպացի գործընկերներիս կողմից քարաքոսի մի նոր տեսակ անվանվել է իմ անունով՝ Ramalina arsenii:

Ինչպե՞ս կարող է իմ երեխան նախապատրաստվել ուսմանը Գերմանիայում

Հավանաբար, Դուք մտահոգված եք, որ Ձեր երեխան դեռ չի կարող բավարարել արտասահմանում ուսանելու պահանջներին: Գերմանական բուհերը օգնում են ապագա ուսանողներին պատրաստվել դրան:

Բազմաթիվ բուհեր առաջարկում են նպատակային նախապատրաստական դասընթացներ Գերմանիայում ուսանելու համար:

Գերմանիայում ուսման պահանջներին ծանոթանալու շատ լավ հնարավորություն է ընձեռում մասնակցությունը **ամառային դասընթացներին**: Նմանատիպ դասընթացները լավ միջոց են Գերմանիայում համալսարանական կյանքի մասին նախնական պատկերացում կազմելու համար: Այս դասընթացները առաջարկվում են սովորաբար ամառվա ամիսներին (հունիս-սեպտեմբեր) ամբողջ Գերմանիայում, տարբեր բուհերում: Լեզվի դասընթացներից բացի, մասնակիցները կարող են նաև հաճախել այլ կարճաժամկետ մասնագիտական դասընթացների (→ www.daad.de/sommerkurse):

Գերմանիայում բազմաթիվ համալսարաններ ունեն իրենց նախապատրաստական քոլեջները՝ ուսումնապատրաստական ներածական դասընթացներով, որոնք պետք է անցնեն օտարերկրյա ուսանողները նախքան բակալավրիատ ընդունվելը: Սակայն ցանկանում ենք հիշեցնել, որ Հայաստանի ուսանողներին դա չի վերաբերում: **Հայաստանի ուսանողները դպրոցն ավարտելուց հետո կարող են անմիջապես ընդունվել բակալավրիատ Գերմանիայում՝ առանց նախապատրաստական քոլեջ հաճախելու**:

Կա նաև ակադեմիական նախապատրաստական թեստ, որի միջոցով (→ www.testas.de/en) դիմորդները կարող են հեշտությամբ ստուգել, թե արդյոք իրենց ընդհանուր և առարկայական գիտելիքները բավարար են ուսումը գերմանական բուհում շարունակելու համար:

Ո՞ր բուհն է առավել նպատակահարմար իմ երեխայի համար

Գերմանիայի շուրջ 420 հավատարմագրված պետական բուհերի շարքում ընտրություն կատարելը դժվար է: Դրանք գտնվում են ոչ միայն մեգապոլիսներում, ինչպիսիք են Բեռլինը, Համբուրգը, Մյունխենը, Քյոլնը, այլ նաև ամբողջ երկրի 180 մեծ ու փոքր քաղաքներում (էջ 36):

Կան բարձրագույն ուսումնական հաստատությունների երեք տարբեր տեսակներ.

- համալսարաններ (գիտական կրթություն),
- մասնագիտացված բուհեր (դեպի պրակտիկա ուղղված կրթություն),
- արվեստի, երաժշտական կամ կինեմատոգրաֆիայի բուհեր (արվեստագիտական կրթություն):

Տվյալ հաստատությունների մեծամասնությունը ֆինանսավորվում է պետության կողմից:

Գերմանիայում ուսանողների ավելի քան 90 տոկոսը հաճախում է պետական բուհեր: Ի տարբերություն **մոտավորապես 120 մասնավոր** բուհերի, պետական բուհերում ուսումը հիմնականում անվճար է:

Ուսման որակը հավասարաչափ բարձր է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերում:

Ձեզ համար ճիշտ համալսարան ընտրելու ընթացքում խորհուրդ ենք տալիս այցելել ***CHE University Ranking*** (→ www.universityranking.de) կայքը, որը կօգնի Ձեզ նախնական կողմնորոշում ստանալու հարցում: Շատ գերմանական բուհեր, ինչպես նաև DAAD-ն ներկայանում են միջազգային **տարբեր կրթական ցուցահանդեսներում:** Մանրամասն տեղեկություններ ձեռք բերելու համար արժե այցելել այնտեղ:

Այն բուհը, որտեղ սովորում է Ձեր երեխան, հավանաբար առաջարկում է հատուկ փոխանակման ծրագրեր Գերմանիայի հետ: Այդպիսի առաջարկները հեշտացնում են արտերկրում ուսման կազմակերպումը:

STUDY AND KICKSTART YOUR CAREER IN GERMANY.

Say HELLO to excellent universities with a wide range of courses and get an internationally renowned degree.

study-in-germany.de

Scan me.

#HelloGermany

AN INITIATIVE OF THE

Federal Ministry of Education and Research

Study in Germany

Land of Ideas

Ո՞ր մասնագիտությունն է առավել նպատակահարմար իմ երեխայի համար

Ուսումնական ծրագրերի և մասնագիտության ընտրությունը կախված է Ձեր երեխայի անհատական կարիքներից և հետաքրքրություններից: Այս դեպքում էլ ընտրության լայն հնարավորություն կա:

Գերմանական բուհերն առաջարկում են ուսումնական ծրագրեր բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում:

Այստեղ կարելի է.

- ստանալ **առաջին մասնագիտական կրթությունը (բակալավրիատ)**,
- ուսումնառության ընթացքում կարճաժամկետ ճանաչողական այցի իրականացում,
- բակալավրի կոչում ստանալուց հետո ընդունվել **մագիստրատուրա**,
- ստանալ **դոկտորի կոչում**:

Շատ ծրագրեր նախագծված են հաշվի առնելով առարկայական և հատուկ թեմատիկ հետաքրքրությունները:

Ընդհանուր առմամբ գերմանական բուհերը ուսանողներին առաջարկում են ավելի քան **21,000 գրավիչ մասնագիտություններ և դասընթացներ**: Դրանց մոտավորապես կեսը ավարտական մակարդակի ծրագրեր են, և մոտավորապես **1800-ը ունեն միջազգային ուղղվածություն**:

Բացի առկա ուսումնական ծրագրերից կան նաև բազմաթիվ հեռակա ուսումնական ծրագրեր: Հետաքրքիր տարբերակ են նաև **երկակի ուսումնական ծրագրերը**, որոնք առաջարկում են համալսարանական դասընթացներ՝ զուգորդված մասնագիտական ուսուցման կամ աշխատանքային փորձի հետ գործընկեր ընկերությունում:

Ճիշտ մասնագիտություն ընտրելու հարցում կօգնի → www.myguide.de կայքը: Բացի այդ, մեր մասնագետները խորհրդատվություններ են առաջարկում արտասահմանում գտնվող DAAD-ի գրասենյակներում և տեղեկատվական կենտրոններում: Տեղեկատվություններ կարող եք ստանալ նաև Գերմանիայի դեսպանություններում:

Որքան ժամանակ պետք է մնալ Գերմանիայում

Գերմանիայում սովորելու որոշումը Ձեզ համար, անշուշտ, կարևոր որոշում է: Գուցե Դուք վստահ չեք, արդյոք երկարատև մնալն արտասահմանում Ձեր երեխայի համար ճիշտ որոշում է:

Այնուամենայնիվ, պարտադիր չէ, որ ուսումնական այցը երկար տևի:

Կան ուսման նպատակով Գերմանիայում **կարճաժամկետ** գտնվելու մի շարք հնարավորություններ, որոնք նպաստում են ուսմանը հայրենիքում: Ընդամենը մի քանի շաբաթը կամ մի քանի ամիսը Ձեր երեխայի կենսագրության մեջ զգալի առավելություն կլինի:

Գերմանական բուհերը ամեն տարի առաջարկում են **լեզվի և մասնագիտական կարճաժամկետ դասընթացներ**: Կարճաժամկետ ուսման մեկ այլ հնարավորություն են ընձեռում **փոխանակման այն ծրագրերը**, որոնք, հավանաբար, կառաջարկվեն Ձեր երեխայի հայրենի բուհի կողմից: Այդ շրջանակներում հաճախ հնարավոր է մեկնել Գերմանիա մի քանի ամսով: Կարճաժամկետ **պրակտիկան** նույնպես շատ լավ հնարավորություն է:

Հետաքրքիր այլընտրանք կարող են դառնալ առցանց դասընթացները:

Բազմաթիվ համալսարաններ առաջարկում են **առցանց կարճաժամկետ դասընթացներ կամ նույնիսկ առցանց ամբողջական ուսումնական ծրագրեր**: Անկախ նրանից, թե որտեղ եք ապրում, այս տարբերակը թույլ կտա Ձեզ սովորել գերմանական բուհում: Եվ գոնե վիրտուալ տարբերակով Դուք հնարավորություն կունենաք ընկղմվել համալսարանական մշակույթի մեջ և փոխանակվել փորձով ուսանողների հետ ամբողջ աշխարհից:

Արևիկ Հարությունյան
DAAD Թբիլիսի տարածաշրջանային գրասենյակ,
կրթաթոշակային ծրագրերի համակարգող

2021 թվ. ես միացել եմ DAAD տարածաշրջանային գրասենյակի թիմին որպես կրթաթոշակների խորհրդատու: Այս ընթացքում ես հասցրել եմ ծանոթանալ մեծ թվով ուսանողների և հետապտտողների հետ, ովքեր ամեն տարի DAAD-ի օգնությամբ հնարավորություն են ստանում ուսանել և հետապտտել Գերմանիայում՝ եվրոպական ամենաառաջադեմ երկրներից մեկում:

Ես ուրախ եմ, որ ինձ հնարավորություն է ընձեռվել համակարգել DAAD կրթաթոշակային ծրագրերը և իմ խորհուրդներով օգնել երիտասարդներին հասնել իրենց նպատակներին: Գերմանիայում ստացած բարձրորակ կրթությունը և հեղինակավոր միջազգային դիպլոմը գնալով ավելի շատ են հետաքրքրում հայ ուսանողներին և հետապտտողներին, չէ որ դրանք օգնում են ավելի մրցունակ դառնալ աշխատանքային շուկայում:

Ուսումն ավարտած և հայրենիք վերադարձած երիտասարդները միշտ հիացմունքով են խոսում Գերմանիայում անցկացրած ժամանակաշրջանի մասին: Նրանք ավելի գիտակից, նպատակասլաց և ինքնուրույն են դառնում: Իսկ Գերմանիայում ձեռք բերած մասնագիտական փորձը օգնում է նրանց աշխատանք գտնել երկրի առաջատար կազմակերպություններում:

Կարևոր է նշել նաև ծնողների դերը երեխայի կրթության հարցում: Հաճելի է տեսնել ավելի ու ավելի շատ ծնողների, ովքեր ձգտում են տեսնել իրենց երեխաներին Գերմանիայի առաջատար բուհերում: Մենք սիրով անցկացնում ենք խորհրդատվություններ նաև ծնողների համար և օգնում նրանց և նրանց երեխաներին կողմնորոշվել բուհի և մասնագիտության ընտրության հարցում: Հավատացնում ենք, որ Գերմանիայում ուսանելը կդառնա այն ամուր հիմքը, որը կօգնի իրականացնել Ձեր երեխայի երազանքները:

Ինչ արժե ուսումը Գերմանիայում

Գերմանական բուհերի մեծ մասը ֆինանսավորվում է պետության կողմից: Այդ **պետական բուհերում ուսման վարձը բացակայում է կամ համեմատաբար ցածր է**: Մասնավոր բուհերում ուսման վարձը հիմնականում ավելի բարձր է:

Բուհի բոլոր ուսանողները վճարում են այսպես կոչված կիսամյակային անդամավճար:

Անդամավճարի չափը բուհից բուհ տարբեր է: **Կիսամյակի համար նախատեսեք մոտ 150 – 400 եվրո**: Այդ վճարը հիմնականում ընդգրկում է **կիսամյակային տոմսը**, որով ուսանողները բուհի շրջակայքում կարող են անվճար օգտվել հասարակական տրանսպորտից:

Գերմանիայում ապրելու արժեքը համապատասխանում է ԵՄ միջին ցուցանիշին:

Փոքր քաղաքներում կարելի է բավարարվել ավելի քիչ գումարով, քան մեծ քաղաքներում: Ըստ վիճակագրության տվյալների իրենց ծախսերը հոգալու համար Գերմանիայում ուսանողներն իրենց տրամադրության տակ **ամսական պետք է ունենան 934 եվրո**:

Ի դեպ, յուրաքանչյուր օտարերկրյա ուսանող պետք է ներկայացնի այսպես կոչված **ֆինանսավորման վկայական**, որը կերաշխավորի նրա ֆինանսավորումը: Որպես կանոն պահանջվում է, որ Ձեր երեխան **մեկ տարվա համար իր տրամադրության տակ ունենա 11,208 եվրո:** Տեղեկանալու համար, թե ինչ ձևով պետք է ներկայացնեք այդ վկայականը, կարող եք դիմել Հայաստանում հավատարմագրված Գերմանիայի դեսպանատուն:

Օտարերկրյա ուսանողները Գերմանիայում աշխատելու միայն սահմանափակ իրավունք ունեն: Կողմնակի աշխատանքը կարող է բարելավել բյուջեն, բայց ուսման հետ մեկտեղ գրեթե հնարավոր չէ միայն աշխատանքի միջոցով հոգալ կենցաղային բոլոր ծախսերը:

Կամն արդյոք կրթաթոշակներ կամ այլ ֆինանսական օգնություններ

Կան մի շարք օժանդակություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսանելու նպատակով գտնվել Գերմանիայում ինչպես կարճ, այնպես էլ երկար ժամանակով:

Արտասահմանցի ուսանողները կարող են դիմել տարբեր հաստատություններ՝ կրթաթոշակ ստանալու համար:

Արտասահմանում գործող DAAD-ի գրասենյակներում և տեղեկատվական կենտրոններում կարող եք հետաքրքրվել, թե արդյոք Ձեր երեխայի համար հնարավոր է ստանալ ֆինանսական օժանդակություն:

Կրթաթոշակային ծրագրերը բազմազան են: Ֆինանսական աջակցությունը հնարավոր է բազմաթիվ ուսումնական այցերի համար՝ լեզվի և մասնագիտական կարճաժամկետ դասընթացներ, պրակտիկա, ուսումնական և հետազոտական այցեր:

DAAD-ի կրթաթոշակների տվյալների բազան (→ www.funding-guide.de) հնարավորություն է տալիս համացանցում փնտրել տարբեր կրթաթոշակներ: Դուք կգտնեք ոչ միայն DAAD-ի, այլ նաև այլ օժանդակող կազմակերպությունների կողմից առաջարկվող կրթաթոշակներ:

Բայց և այնպես պետք է նշել, որ գերմանական օժանդակող կազմակերպությունները չեն ֆինանսավորում բակալավրիատի ուսանողներին:

DAAD-ն նաև նպատակ ունի օգնել **հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող ուսանողներին՝** ֆինանսավորելով նրանց ուսումը Գերմանիայում:

Գերմանական բուհերը նույնպես տրամադրում են որոշ կրթաթոշակներ:

Ընդհանուր առմամբ 310 գերմանական բուհեր առաջարկում են, օրինակ, ***Deutschlandstipendium*** կրթաթոշակը, որն աջակցում է նաև օտարերկրյա ուսանողներին: Այսպիսով, միշտ արժե Ձեր կողմից ընտրած բուհում հարցնել հնարավոր ֆինանսական օժանդակության մասին:

Աննեգրետ Բայեր
DAAD լեկտոր Բրյուսովի անվան պետական համալսարանում: Դասավանդում է գերմաներենը որպես օտար լեզու և գրականություն առարկաները:

Դանիել Լեպետի
DAAD լեկտոր Երևանի պետական համալսարանում: Դասավանդում է գերմաներենը որպես օտար լեզու առարկան միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետում:

Հայ ուսանողների հետաքրքրությունը Գերմանիայում ուսանելու նկատմամբ շատ մեծ է, և մենք ուրախ ենք, որ կարող ենք խորհուրդ տալ երիտասարդներին արտասահմանում սովորելու հետ կապված հարցերում: Հետաքրքրված մարդկանց հետ զրույցում միշտ նշում ենք, որ ուսման վայր ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել նաև Գերմանիայի փոքր քաղաքների բուհերին: Այնտեղ ուսման որակը բարձր մակարդակի վրա է և չի փիջում մեծ քաղաքների բուհերին: Միևնույն ժամանակ, փոքր քաղաքի միջավայրին հարմարվելն ավելի հեշտ է, հատկապես նրանց համար, ովքեր մեծ քաղաքում չեն մեծացել: Բացի այդ, փոքր քաղաքներում ապրելը հաճախ ավելի մատչելի է:

Երբեմն ծնողների համար հեշտ չէ տեսնել, որ իրենց երեխաները միայնակ տեղափոխվում են օտար երկիր: Միաժամանակ, ուսումնառությունից հետո Հայաստան վերադարձած գերմանական բուհերի շրջանավարտների հետ զրույցների ընթացքում կրկին ու կրկին համոզվում ենք, թե Գերմանիայում կրթությունը որքանով է նպաստում երիտասարդների զարգացմանը:

Առանց բացառության բոլորը նշում են, որ Գերմանիայում անցկացրած ժամանակը իրենց համար նշանակալից էր, և որ, բացի բազմաթիվ լեզվական և մասնագիտական հմտություններից, որոնք նրանք ձեռք են բերել, նրանք նաև ահռելի անձնական զարգացում են ապրել:

Նրանք բոլորն էլ գտնում են, որ Գերմանիայում սովորելը շատ ձեռնտու է իրենց մասնագիտական կամ ակադեմիական կարիերայի համար:

Ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ իմ երեխային երկիր մուտք գործելու համար

Արդյոք Ձեր երեխան որպես արտասահմանցի ուսանող Գերմանիա գնալու համար վիզայի կարիք ունի, կախված է նրանից, թե նա որ երկրից է մեկնում և ինչքան ժամանակով է ուզում մնալ Գերմանիայում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Գերմանիա մուտք գործելուց առաջ պետք է ստանան վիզա:

Տարբերակվում են վիզայի երկու տեսակ.

1. **Շենգենյան վիզա**, որը տրամադրվում է Շենգենյան համաձայնագրում ներառված երկրներ կարճաժամկետ այցերի (առավելագույնը 90 օր կես տարվա ընթացքում) համար՝ առանց աշխատանքային գործունեություն ծավալելու հնարավորության:

2. **Ազգային վիզա** 90 օրից ավելի տևողությամբ կացության համար (օրինակ՝ ուսման կամ ընտանիքի վերամիավորման նպատակով կամ աշխատանքային գործունեության համար):

Մանրամասն տեղեկություններ Դուք կստանաք Հայաստանում գործող **Գերմանիայի դեսպանատանը**: Այնտեղ Ձեզ կօգնեն վիզային վերաբերող բոլոր հարցերում:

Որքանով է ժամանակակից և ապահով Գերմանիան

Գերմանիան համարում է իրեն **հյուրընկալ և կոսմոպոլիտ երկիր**: Տարբեր ազգերի մարդիկ այստեղ միասին ապրում են խաղաղ: Նշենք նաև, որ Գերմանիայի բնակչության ավելի քան 16 տոկոսն ունի ներգաղթային ծագում:

Ազատությունը, հարգանքը և հանդուրժողականությունը Գերմանիայի ժողովրդավարության այուներն են:

Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, և հատկապես գերմանական բուհերում, **բազմազանությունն ու հավասար հնարավորությունները** կարևոր դեր են խաղում: **Կլիմայի պաշտպանությունը** և **կայուն զարգացումը** սոցիալական հիմնական խնդիրներն են:

Գերմանիան ապահով երկիր է՝ համեմատած աշխարհի այլ երկրների հետ:

Հանցավորության պատճառով շատ անհանգստանալ պետք չէ: Այստեղ կարելի է ազատ շրջել առանց անվտանգության ապահովման հատուկ միջոցառումների, լինի դա մեծ թե փոքր քաղաք:

Ոստիկանությանն արժե վստահել և կարելի է հույս դնել նրա օգնության վրա:

Գերմանիայում **ոստիկանություն** կարելի է զանգահարել ցանկացած հեռախոսից **110** անվճար հեռախոսահամարով:

Աշխարհի գրեթե յուրաքանչյուր երկիր Գերմանիայում ունի **դեսպանատուն** կամ **հյուպատոսություն**: Ուստի խնդիրներ ունենալու դեպքում նաև տեղում կան **Ձեր հայրենիքից խորհրդատուներ կամ անձինք, ում կարելի է դիմել**: Բացի այդ, անձնական անվտանգության հետ կապված հարցերի, ինչպես նաև հավանական խնդիրներ ունենալու դեպքում Ձեր երեխան միշտ կարող է դիմել տվյալ բուհի արտասահմանյան կապերով և արտասահմանցի ուսանողների հարցերով զբաղվող բաժին:

Արթուր Շուքուրյան

Բժշկ.գիտ.դ-ր, պրոֆեսոր, ՀՀ ազգային ակադեմիայի թղթակից անդամ, Երևանի պետ.բժշկ.համալսարանի քիթ-կոկորդականջաբանության (ՔԿԱ) ամբիոնի վարիչ, «Աստղիկ» ԲԿ ԼՕՌ ծառայության ղեկավար, «Շենգավիթ» ԲԿ փոխտնօրեն գիտական գծով

Շուրջ 33 տարի ես և ընտանիքիս անդամները ակտիվորեն մասնակցում ենք DAAD-ի կողմից Հայաստանում և երկրից դուրս կազմակերպված տարբեր միջոցառումներին՝ կրթական ծրագրերին, լեզվի և մասնագիտական դպրոցներին, սեմինարներին, հանդիպումներին միջազգային մասնակցությամբ: Նաև կարողացել ենք հանդես գալ մի քանի կոնֆերանսների կազմակերպիչներ, որոնք հովանավորվեցին DAAD-ի կողմից:

Հանդիսանալով DAAD Alumni Stipendiat՝ ես առաջին անգամ 1990թ. մասնակցեցի, 10 ամիս տևողությամբ, DAAD հետազոտական ծրագրին ԳԴ Ք.Մյունխենի շատ հայտնի „Grosshadern“ Բժշկական Կենտրոնում: Այդտեղ Պրոֆեսոր Է.Կաստենբաուերի (երջանկահիշատակ առաջին ուսուցիչս ԳԴ) գլխավորությամբ անցավ իմ ամենահիշարժան, մասնագիտական առումով շատ կարևոր ժամանակաշրջանը: Հետագայում մասնակցեցի DAAD կազմակերպված միջոցառումներին և առաջարկված մրցույթային ծրագրերին՝ ԳԴ տարբեր քաղաքների հայտնի ԲԿ Քիթ-կոկորդ-ականջաբանական կլինիկաներում աշխարհահռչակ պրոֆեսորների և նրանց թիմակիցների հետ միասին:

Պետք է խոստովանել, որ նման ծրագրերի մասնակցությունը առիթ դարձավ ամբողջությամբ փոխելու մեր ապրելակերպի ոճը, ավելի ճիշտ գնահատելու կյանքի արժանիքները, դառնալ առավել կազմակերպված, մարմնավորել վաղեմի երազանքները և, ամենա կարևորը, խորացնել մասնագիտական գիտելիքները և ունակությունները՝ ներդնելով դրանք տարբեր գիտական և գործնական առողջապահական ծրագրերի մեջ, ստեղծելով ժամանակակից կլինիկական կենտրոններ և կրթելով բազմաթիվ մասնագետների մեր հայրենիքում:

Լորա Շուքուրյան

«Աստղիկ» ԲԿ ԼՕՌ բաժանմունքի կլին. օրդինատոր,
բժշկ.գիտ.դ-ր, պրոֆեսոր Արթուր Շուքուրյանի դուստրը

DAAD-ի և ընդհանրապես Գերմանիայի մասին իմացել եմ դեռ ծնողներից: Իրենք միշտ հիացմունքով էին խոսում այդ ծրագրի, Գերմանիայում տիրող կարգ ու կանոնի, գերմանացիների կարգապահության և կազմակերպվածության մասին: Ես լցվեցի սիրով և հարգանքով Գերմանիայի նկատմամբ: Երբ ընդունվեցի բժշկական համալսարան, տեղեկացա, որ մեզ մոտ կան գերմաներեն լեզվի դասընթացներ, ինչպես նաև այդ ժամանակ ծանոթացա Մերի Նավասարդյանի հետ, ով պատմեց ինձ DAAD-ի մասին: Ես հասկացա, որ ինձ հնարավորություն կընձեռվի ընդգրկվել նման փոխանակման ծրագրի մեջ, մեկնել Գերմանիա, խորացնել մասնագիտական գիտելիքներս և ծանոթանալ Գերմանիայի մշակույթի հետ:

DAAD-ի կրթաթոշակ շահել եմ 4 անգամ: 2009 և 2011թթ. ամառային լեզվի դասընթացների կրթաթոշակներ եմ շահել և համապատասխանաբար եղել եմ Մյունխեն և Իլմենաու քաղաքների բուհերում: 2014 և 2018 թթ. եղել եմ Հայդելբերգի և Հանովերի համալսարանական կլինիկաների ԼՕՌ բաժանմունքներում հետապոտական ծրագրերով, որոնք ղեկավարեցին այդ ոլորտի հանրահայտ պրոֆեսորներ:

DAAD-ի շնորհիվ հնարավորություն եմ ստացել խորացնել մասնագիտական և լեզվի գիտելիքներս, շրջագայել ամբողջ Գերմանիայով մեկ, մոտիկից ծանոթանալ նրա պատմության և մշակույթի հետ, ձեռք բերել ընկերներ աշխարհի տարբեր երկրներից: DAAD-ն օգնել է ինձ աշխարհայացքս և մտահորիզոնս լայնացնել, ինչի համար անչափ շնորհակալ եմ DAAD-ի ողջ թիմին:

Ցանկությունս և ապագայի իմ տեսլականն է Գերմանիայում ծանոթության շրջանակի ընդլայնումը, ինչի շնորհիվ կունենամ իմ փոքր ներդրումը Հայաստան-Գերմանիա կապերի ամրապնդման գործում:

Ինչպիսի՞ն է բժշկական սպասարկումը

Գերմանական առողջապահական համակարգը, իր բարձր որակավորում ունեցող բազմաթիվ բժիշկներով, համարվում է աշխարհում ամենալավերից մեկը: Եթե Ձեր երեխան բուժօգնության կարիք ունենա, ապա Գերմանիայում այդ ծառայությունը կմատուցվի ավելի լավ, քան ցանկացած այլ երկրում:

Ով ցանկանում է ուսանել Գերմանիայում, պետք է ունենա բժշկական ապահովագրություն:

Գերմանիա մեկնելուց առաջ կարևոր է ճշտել, թե արդյոք Ձեր երեխան ունի **ապահովագրություն**: Հնարավոր է, որ այն բժշկական ապահովագրությունը, որը Ձեր երեխան ունի իր հայրենիքում, գործի նաև Գերմանիայում: Օրինակ՝ Եվրոպական բժշկական ապահովագրական քարտ (EHIC) ունեցողները Գերմանիայում ևս ապահովագրված են:

Եթե Ձեր երկրի ապահովագրությունը չի ընդունվում, ապա Ձեր երեխան պետք է ապահովագրվի Գերմանիայում: Օրինական ապահովագրական դրամարկղում դա արժե **ամսական մոտ 100 եվրո**: Համալսարանի արտասահմանյան կապերով և օտարերկրացի ուսանողների հարցերով զբաղվող բաժինը հաճույքով կօգնի բժշկական ապահովագրության հետ կապված հարցերի դեպքում:

Բժշկական ապահովագրությամբ Գերմանիայում կարելի է անվճար դիմել բժշկի:

Ծայրահեղ դեպքերի համար հիվանդանոցներում գործում է շտապ օգնության ծառայությունը: Շտապ օգնության բժիշկ և մեքենա կարելի է կանչել օրվա ցանկացած ժամին՝ զանգահարելով **112** անվճար հեռախոսահամարին:

Պետք է նաև իմանալ, որ Գերմանիայում դեղամիջոցները վաճառվում են միայն **դեղատներում**: Որոշ դեղամիջոցներ, օրինակ՝ հակաբիոտիկներ, որոնք Ձեր երկրում հնարավոր է գնել առանց դեղատոմսի, այստեղ տրվում են միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով:



Ինչպե՞ս են Գերմանիայում հոգ տանելու իմ երեխայի մասին

Յուրաքանչյուր բուհում կա արտասահմանյան կապերով և արտասահմանցի ուսանողների հարցերով զբաղվող բաժին կամ **միջազգային գրասենյակ** (*Akademisches Auslandsamt*): Արտասահմանյան կապերով և օտարերկրացի ուսանողների հարցերով զբաղվող բաժնի աշխատակիցները Ձեր անմիջական խորհրդատուներն են դեռ Գերմանիայում ուսումը ծրագրելու ժամանակ: Տվյալ բաժինը օգնում է նաև տեղում: Գերմանիա ժամանելուց հետո Ձեր երեխան կապահովվի բոլոր անհրաժեշտ տեղեկություններով:

Ձեր երեխային կաջակցեն բոլոր կազմակերպչական հարցերում:

Որոշ գերմանական բուհեր ունեն այսպես կոչված **խնամակալության ծրագրեր**: Նման ծրագրերում տեղացի փորձառու ուսանողները անձնական խորհրդատու են լինում արտասահմանցի ուսանողների համար:

Բազմաթիվ գերմանական բուհերում գործում են նաև ուսանողների սոցիալական աջակցման կենտրոններ (***Studierendenwerk***): Ուսանողների սոցիալական աջակցման շատ կենտրոններ օտարերկրացի ուսանողների համար առաջարկում են ծառայությունների փաթեթ, որը բժշկական ապահովագրության հետ մեկտեղ ներառում է նաև կացարան և սնունդ, ինչը թեթևացնում է Գերմանիայում ապրելու սկզբնական ժամանակվա հոգսերը:

Յուրաքանչյուր բուհում կան **ուսանողական ներկայացուցչություններ** և **բուհական խմբակներ**, որոնք հաճախ կազմակերպում են նաև կողմնորոշման դասընթացներ սկսնակների համար:

Եվ վերջապես, մասնագիտական հարցերի դեպքում մշտապես ուսանողների տրամադրության տակ են նաև դասախոսները:

Ամեն դեպքում կարևոր է իմանալ, որ գերմանական բուհերում ուսանողներից որոշակի ինքնուրույնություն է ակնկալվում:

Ուսանողները պետք է ի վիճակի լինեն ինքնուրույն ստանձնել **պատասխանատվությունն** իրենց ուսման ընթացքի համար: Այսպիսով, կան բազմաթիվ օգնության առաջարկներ, սակայն ուսանողները պետք է կարողանան ինքնուրույն օգտագործել դրանք:

Սրբուհի Լուլուկյան

Մ.գ.թ., դոցենտ, Բրյուսովի անվան պետական համալսարանի գերմաներենի ամբիոն, ՀՊՄՀ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Գյոթե ինստիտուտի Վրաստանի տարածաշրջանային գրասենյակի վերապատրաստող մասնագետ, Հայաստանում «Այբ» դպրոցի Օտար լեզուների առարկայախմբի ղեկավար, AADL-DAAD շրջանավարտ և բազմակի կրթաթոշակակիր

Գերմանիան մտածողների, բանաստեղծների, գյուտարարների և արվեստագետների երկիր է՝ հարուստ պատմությամբ, մշակույթով և որակյալ կրթական հնարավորություններով: Գերմանական համալսարանների ճկուն համակարգը, պրոֆեսորադասախոսական ներուժը, գիտահետազոտական հաստատություններում աշխատելու, գործընկերների հետ լավագույն փորձի փոխանակման և կիրառման, բազմամշակույթային միջավայրում սովորելու և ստեղծագործելու, մասնագիտական կարողությունները և հմտությունները կարգացնելու հնարավորությունները նպաստեցին իմ շարունակական կրթության նոր ճանապարհը կառուցելուն:

Հետազոտական աշխատանքներ իրականացնելը մարտահրավերային է և, երբ գտնվում ես մի միջավայրում, որտեղ աջակցում, մոտիվացնում և կինում են քեզ նորարական գիտելիքներով, ինչպես նաև նպաստում դրանց գործնական կիրառմանը քո երկրում, կարող է լինել լավագույն ներդրումը յուրաքանչյուր մարդու կյանքում:

Գերմանական համալսարաններում սովորել, նշանակում է նպատակաուղղված, առանցքային կարողունակությունների վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների ընդլայնում և դրանք գործնականում կիրառելու կարողությունների կարգացում: Այս ամենի կողքին պետք է հիշել նաև միջմշակութային հաղորդակցության հնարավորությունների մասին՝ շփվել լեզվակրի հետ, բացահայտել երկիրը յուրովի:

Գերմանիայում ուսումնառությունը խթանեց իմ մասնագիտական ամբողջ ուղին, տվեց նոր հնարավորություններ և փոխեց իմ վերաբերմունքը կրթության, գիտության և դասավանդման մոտեցումների վերաբերյալ:

Որտեղ է ապրելու իմ երեխան

Գերմանիայում ուսանողներն ապրում են կամ ուսանողական հանրակացարանում, կամ մասնավոր վարձած բնակարանում կամ սենյակում:

Ի տարբերություն այլ երկրների՝ գերմանական բուհերում ուսանողները ինքնաբերաբար կացարան չեն ստանում:

Գերմանական բուհերից շատ քչերն են կամպուսային, և դա է պատճառը, որ սովորաբար բուհի տարածքում չկան բնակվելու հնարավորություններ:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր համալսարանական քաղաքում կան **ուսանողական հանրակացարաններ**: Այնտեղ սենյակ ունենալը հիմնականում բնակվելու ամենամատչելի հնարավորությունն է: Բացի այդ, այնտեղ Ձեր երեխան հնարավորություն կունենա հանդիպել և ընկերանալ այլ ուսանողների հետ: Տեղեկատվությունների համար կարող եք այցելել հետևյալ կայք՝ → www.daad.de/wohnheimfinder:

Մեկ այլ տարբերակ են **մասնավոր վարձած բնակարանները**: Առաջարկը բազմատեսակ է՝ դատարկ սենյակից մինչև կահավորված բնակարան. մասնավոր բնակարանների շուկայում ամեն ինչ կա:

Ուսանողները հատկապես նախընտրում են ընդհանուր բնակարանները (WG):

WG-ում (*Wohngemeinschaft*) մի քանի հոգի միասին ապրում են մի բնակարանում և կիսում են վարձավճարը: Յուրաքանչյուրն ունի իր սենյակը, բայց բոլորն օգտվում են նույն խոհանոցից և լոգասենյակից: Առավելությունն այն է, որ **ընդհանուր բնակարանում** ապրելը մատչելի է: Բացի այդ, այստեղ արագ ես ծանոթանում մարդկանց հետ, իսկ գերմանացիների հետ միասին ապրելը հիանալի հնարավորություն է սովորել գերմաներեն:

Բնակարանի որոնման հետ կապված օգտակար ցուցումներ կտան համալսարանների արտասահմանյան կապերի և արտասահմանցի ուսանողների հարցերով զբաղվող բաժինները:

Ինչ կարող է առաջարկել Գերմանիան որպես ճանապարհորդական երկիր

Հավանաբար Դուք կցանկանաք այցելել Ձեր երեխային Գերմանիայում: Դա հիանալի գաղափար է:

Գերմանիան ունի շատ գրավիչ լանդշաֆտ:

Այստեղ, Հյուսիսային և Բալթիկ ծովերի երկայնքով, Դուք կգտնեք գեղեցիկ կղզիներ և ավազուտային լողափեր: Իսկ հարավում գտնվող ձյունածածկ Ալպերը կատարյալ են դահուկներով սահելու և զբոսանքի համար: Բայց կան նաև հողմահարված դաշտեր, ճահիճներ, բլուրներ և գեղատեսիլ գետահովիտներ:

Ճարտարապետական առումով այստեղ բացահայտելու շատ բան կա:

Միջնադարյան ամրոցներ և պալատներ, ռոմանական և գոթական եկեղեցիներ, 19-րդ դարի ճարտարապետության օրինակներ և, իհարկե, գերժամանակակից շինություններ: Ոչ միայն այնպիսի **մեգապոլիսներում**, ինչպիսիք են Բեռլինը, Համբուրգը, Մյունխենը և Քյոլնը անելիքներ կան, այլ նաև փոքր քաղաքներում և գյուղերում **մշակութային առումով կարելի է բացահայտել** և փորձել շատ հետաքրքիր բաներ:

Ամբողջ տարվա ընթացքում Գերմանիայում տոնում են մարզային տոներ:

Այդպիսի տոներից են օրինակ Հռենոսյան դիմակահանդեսը, Պֆալցյան գինու տոները և Մյունխենի Օքթոբերֆեստը (Հոկտեմբերյան տոնը):

Գերմանիայի խոհանոցը նույնպես շատ բազմատեսակ է՝ սկսած տարածաշրջանային հատուկ ավանդական ուտեստներից և տարատեսակ էթնիկ խոհանոցներից, մինչև Միշլենի աստղի արժանացած ռեստորանների ստեղծագործությունները:

Գերմանիայի գերժամանակակից տրանսպորտային ցանցը ապահովում է արագ և հարմարավետ երթևեկություն:

Բացի այս, Գերմանիան ընկած է Եվրոպայի սրտում և հիանալի ելակետ է այլ եվրոպական երկրներին ծանոթանալու համար: Ինքներդ համոզվեք դրանում:

Լրացուցիչ տեղեկություններ

Ուսումը Գերմանիայում պլանավորելու վերաբերյալ խորհուրդներ և օգնություն Դուք կարող եք ստանալ՝ դիմելով հետևյալ հաստատություններ կամ անձանց՝

- DAAD-ի տարածաշրջանային գրասենյակ Թբիլիսիում
  → www.daad-georgia.org
- DAAD-ի կողմից Հայաստանի բուհեր ուղարկված լեկտորներ (ԵՊՀ, ԲՊՀ)
- Երևանում «Գյոթե կենտրոն»
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն Երևանում

Եվ վերջապես Ձեզ համար խորհրդատու է նաև Բոնում գտնվող DAAD-ի կենտրոնական գրասենյակը: Մի վարանեք: Հարցրեք մեզ:

→ www.daad.de/contactform

Ուսանել Գերմանիայում

→ www.daad-georgia.org
→ www.daad.de/deutschland
→ www.daad.de/publications-germany
→ www.study-in-germany.de

Ուսումնական առաջարկներ

→ www.myguide.de
→ www.daad.de/international-programmes
→ www.daad.de/study-programmes
→ www.universityranking.de
→ www.studienwahl.de

Երկրի մուտքի վիզա ստանալու հետ կապված հարցեր

→ www.eriwan.diplo.de/am-de
→ www.auswaertiges-amt.de

Կրթաթոշակներ և աջակցման ծրագրեր

→ www.funding-guide.de
→ www.deutschlandstipendium.de

Սովորել գերմաներեն

→ www.summerschools.de
→ www.goethe-zentrum.am
→ www.goethe.de
→ www.deutsch-uni.com
→ www.dw.de
→ www.testdaf.de

Թեստ օտարերկրյա ուսանողների համար

→ www.testas.de/en

Առաջիկա համալսարանական տոնավաճառների ամսաթվերը

→ www.study-in-germany.de/events

Առցանց դասընթացներ և դիպլոմային ծրագրեր

→ www.daad.de/international-programmes (“Online formats only”)
→ www.hochschulkompass.de (“Distance learning”)

Գտնել կացարան Գերմանիայում

→ www.daad.de/accommodationfinder

Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների քարտեզ

Խմբագրական տվյալներ

Հրատարակիչ՝
Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն ոչ առևտրային միություն
Քենեդու պողոտա 50
D-53175 Բոն

DAAD-ն գերմանական բուհերը և ուսանողական միությունները միավորող հաստատություն է:

Հաստատությունը ինստիտուցիոնալ կերպով ֆինանսավորվում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից:

Referat K23 – Տեղեկատվություն Գերմանիայում սովորելու վերաբերյալ

Ծրագրի համակարգում՝
Կերստին Նոլդեն, Անգելա Ֆաուստ, DAAD

Խմբագրություն՝
Դոկտոր Դագմար Գիրսբերգ, Բոն

Դիզայն՝
DITHO Design GmbH, Քյոլն

Թարգմանություն՝
Արևիկ Հարությունյան, Թբիլիսի

Տպագրություն՝
CEZANNE ՍՊԸ
Դիդի Դիղոմի, Առչիլ Մեփե փ. 1
0132 Թբիլիսի / Վրաստան

5-րդ հրատարակություն, Հունիս 2023 – 300 հատ

© DAAD

Լուսանկարները՝
Jan von Allwoerden/DAAD (Վերնագիր, էջ 15), Shutterstock (էջ 4), Sebastian Legge/DAAD (էջ 3), franz12/Shutterstock (էջ 8), Andreas Heddergott/TU Muenchen (էջ 11), Flamingo Images/Shutterstock (էջ 12), OL.EG/DAAD (էջ 19), Jacob Lund/Shutterstock (էջ 20), www.chuphinhsanpham.vn (էջ 26), Stock-Asso/Shutterstock (էջ 29), Eduard Tadevosyan (էջ 7, 11, 19, 23, 26, 27, 31)

Գրքույկը տպագրվել է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Federal Foreign Office